ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏ

<<08 >> <<օգոստոս >> 2017 թ N 89

ք. Եղեգնաձոր

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ԿԱՐԵՆ ԱԶԱՏՅԱՆԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՏԱԿ ԳՏՆՎՈՂ «ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳՆԱՁՈՐԻ ԵՐԿՐԱԳԻՏԱԿԱՆ ԹԱՆԳԱՐԱՆ» ՊՈԱԿ-Ի ՏՆՕՐԵՆ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 94-րդ հոդվածի 2-րդ կետով, 95-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6 կետով, ՀՀ Վայոց ձորի մարզպետի 2016 թվականի մայիսի 19-ի N40-Ն որոշմամբ հաստատված հավելված 1-ի 89-րդ կետով և հիմք ընդունելով ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի ենթակայության տակ գտնվող «Եղեգնաձորի երկրագիտական թանգարան» ՊՈԱԿ-ի գործադիր տնօրենի ընտրության մրցութային հանձնաժողովի N3 որոշումը, եզրակացությունը և Կարեն Ազատյանի դիմումը.

ԿԱՐԳԱԴՐՈՒՄ ԵՄ՝

1. 2017 թվականի օգոստոսի 8-ից Կարեն Ազատյանին նշանակել Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզպետարանի ենթակայության տակ գտնվող <<Վայոց ձորի մարզի Եղեգնաձորի երկրագիտական թանգարան >> ՊՈԱԿ-ի գործադիր տնօրենի պաշտոնում, նրա հետ կնքելով ժամկետային աշխատանքային պայմանագիր, 3 /երեք/ տարի ժամկետով:
2. Աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման ու կրթության, մշակույթի և սպորտի վարչություններին՝ օրենքով սահմանված կարգով կազմակերպել հանձնման-ընդունման աշխատանքները:
3. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Հ.ՍԱՐԳՍՅԱՆ